# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

# ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

## ( 2011 - 2016)

Խմբագրական խորհուրդ՝ **Ս.Ա. Առաքելյան** (նախագահ), **Ա. Հ. Մակարյան, Մ. Ա. Ճաղարյան, Գ. Հ. Ավետիսյան, Հ.Ս.Վանյան**

ԵՊՀ ԻՄ-ի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներ.

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տպարան, Իջևան, 2016, 74 էջ:

Սույն վերլուծական ուսումնասիրության նպատակը Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի (ԵՊՀ ԻՄ, Մասնաճյուղ) գործունեության արդյունավետության և կատարողականի գնահատումն է՝ գործունեության առանցքային ցուցանիշների /ԳԱՑ/ սահմանված լրակազմի օգնությամբ: Ներկայացված են ԵՊՀ ԻՄ-ի գործունեության հիմնական ոլորտների առանցքային ցուցանիշները վերջին հինգ (երբեմն չորս) տարիների համար: Այն վեր է հանում ԵՊՀ ԻՄ-ի ձեռքբերումները և թույլ կողմերը՝ նրա հետագա զարգացումն առավել արդյունավետ կազմակերպելու համար: Սույն վերլուծությունը նաև կնպաստի ԵՊՀ ԻՄ-ի որակի ինքնագնահատման կարողությունների հզորացմանը:

Հասցեագրվում է բոլոր այն կառույցներին, որոնց գործունեությունն առնչվում է ԵՊՀ ԻՄ-ի կառավարման և պլանավորման գործընթացներին:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Նախաբան..... 5

*Բնագավառ 1.* Ընդունելություն և համակազմ..... 7

*Բնագավառ 2.* Ուսումնական գործընթաց..... 22

*Բնագավառ 3.* Ռեսուրսներ և կառավարում..... 38

*Բնագավառ 4.* Ենթակառուցվածքներ..... 54

*Բնագավառ 5.* Գիտություն և նորամուծություն..... 65

*Բնագավառ 6.* Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն..... 72

# Նախաբան

Սույն վերլուծությունը կատարվել է ԵՊՀ ԻՄ-ի 2016-2020 թվականների զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման գործընթացի շրջանակներում 2015/16 ուստարում՝ ԵՊՀ ԻՄ-ի համապատասխան կառույցների մասնակցությամբ:

Ուսումնասիրության՝ ստորև ներկայացվող արդյունքներն ունեն երկակի նշանակություն: Առաջին հերթին այս ցուցանիշները կարող են հիմք ծառայել բուհի ինքնավերլուծության ու գործունեության արդյունավետության գնահատման, ինչպես նաև եռամյա և տարեկան հաշվետվությունների ստեղծման համար, մյուս կողմից դրանք կարող են օգտագործվել Համալսարանի ռազմավարական պլանավորման գործընթացում՝ ներքին միջավայրի վերլուծության և հաջորդ SWOT-ի /ուժեղ և թույլ կողմերի, արտաքին հնարավորությունների և վտանգների/ որոշման համար:

ԵՊՀ ԻՄ-ի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների /ԳԱՑ/ առաջարկվող լրակազմն անհրաժեշտ է ռազմավարական պլանավորման գործընթացի տարբեր փուլերի և քայլերի արդյունքները չափելու և վերլուծելու համար: Որպես չափիչ գործիք՝ ԳԱՑ-երը կոնկրետ են, պարզ և հաշվարկելի: Դրանց առկայությունը պլանավորման գործընթացում ապահովում է վերջինիս նպատակների, խնդիրների և ռազմավարության գործնականությունը:

Միջավայրով ուղղորդվող ռազմավարական պլանավորումը ենթադրում է բուհի գործունեության (կամ կատարողականի) գնահատում և համեմատում՝ բուհի կամ նրա շահակիցների կողմից սահմանված «ցանկալի» ցուցանիշների հետ՝ ապահովելով կապը բուհի և միջավայրի կարևորագույն տարրերի միջև: ԳԱՑ-երն այն անհրաժեշտ հենքն են, որոնք կապակցում են բուհի կարևորագույն գործառույթները պլանավորման գործընթացի հետ: Այս ցուցանիշների օգտագործումը ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարական պլանավորման գործընթացում մեզ հնարավորություն է տվել հիմնական ռազմավարական ոլորտներում համեմատել ԵՊՀ ԻՄ-ի գործունեության արդյունքները կամ կատարողականը այլ բուհերի, ԵՊՀ ԻՄ-ի նախորդ տարիների և պլանավորված ցուցանիշների հետ:

Առաջարկվող ցանկում կա ցուցանիշների երկու տեսակ, որոնք ձևավորում են ԳԱՑ-երի լրակազմը: Առաջինը գործ ունի մասնաճյուղի հիմնական գործունեության որոշակի արդյունքի չափման հետ, արդյունք, որի նկատմամբ ԵՊՀ ԻՄ-ն ունի վերահսկողության հնարավորություն: Ցուցանիշների այս խումբը կոչվում է գործունեության արդյունքի գնահատման առանցքային ցուցանիշներ: ԳԱՑ–երի երկրորդ խումբը կապված է այն պայմանների չափման հետ, որոնք անմիջականորեն ազդում են բուհի «առողջական» վիճակի և բարեկեցության վրա, պայմաններ, որոնց նկատմամբ բուհը կարող է ունենալ փոքր վերահսկողություն կամ ընդհանրապես չունենալ:

Համաձայն ընդունված մեթոդաբանության՝ ուսումնասիրությունը կատարելիս իրականացվել են հետևյալ հաջորդական քայլերը:

Առաջին քայլը, որ կատարվել է ԵՊՀ ԻՄ-ի ԳԱՑ-երի համապարփակ ցանկի կազմման ուղղությամբ, Համալսարանի գործունեության հիմնական ոլորտների պարզումն է, որտեղից էլ ընտրվել են ամենակարևոր ԳԱՑ-երը: Առանձնացվել են ԵՊՀ ԻՄ-ի գործունեության 6 հիմնական ոլորտներ.

1. Ընդունելություն և համակազմ
2. Ուսումնական գործընթաց
3. Ռեսուրսներ և կառավարում
4. Ենթակառուցվածքներ
5. Գիտություն և նորամուծություն
6. Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն:

Այնուհետև սահմանվել են ԵՊՀ ԻՄ-ի գործունեության գնահատման առանցքային և «առողջական» վիճակի ցուցանիշները: Կատարվել է ԳԱՑ-երի ուսումնասիրություն և վերլուծություն ըստ տարիների՝ 2011-2016 թթ. ժամանակահատվածի համար: Ստորև բերված է ԵՊՀ ԻՄ-ի ԳԱՑ-երի համապարփակ ցանկը՝ բաղկացած 64 ցուցանիշներից և դասակարգված ըստ ԵՊՀ ԻՄ-ի գործունեության հիմնական ոլորտների:

Առաջարկվող վերլուծական ուսումնասիրությունը հասցեագրվում է ԵՊՀ ԻՄ-ի և նրա ստորաբաժանումների վարչակազմերին, բոլոր այն կառույցներին, որոնց գործունեությունն առնչվում է ԵՊՀ ԻՄ-ի կառավարման և պլանավորման գործընթացներին:

*ԲՆԱԳԱՎԱՌ 1.*

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱԶՄ

| | |
|---|---|
| *Յուցանիշ 1.1.* | Դիմորդների թիվը (ըստ կրթական աստիճանների, ուսուցման ձևերի և ուղղությունների) |
| *Յուցանիշ 1.2.* | Դիմորդների բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում |
| *Յուցանիշ 1.3.* | Դիմորդների բաշխումն ըստ մարզերի |
| *Յուցանիշ 1.4.* | Ընդունելությունն ըստ կրթական աստիճանների (անվճար, վճարովի) |
| *Յուցանիշ 1.5.* | ԵՊՀ ԻՄ-ի ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում |
| *Յուցանիշ 1.6.* | Մրցութային ցուցանիշն ըստ կրթական աստիճանների (դիմորդների և ընդունվածների հարաբերությունը) |
| *Յուցանիշ 1.7.* | Իգական սեռի հաշվեկշիռը դիմորդների և ընդունվածների ընդհանուր հոսքում |
| *Յուցանիշ 1.8.* | Օտարերկրյա դիմորդների թիվը և հարաբերությունը ընդունվածների թվին |
| *Յուցանիշ 1.9.* | Հեռակա ուսուցման դիմորդների թիվը և հարաբերությունն ընդունվածների թվին |
| *Յուցանիշ 1.10.* | Հիմնական ուսանողական համակազմը (ըստ կրթական աստիճանների) |
| *Յուցանիշ 1.11.* | Օտարերկրյա ուսանողների համակազմը և հաշվեկշիռը հիմնական համակազմում |
| *Յուցանիշ 1.12.* | Հեռակա ուսուցման համակազմը (բակալավրիատ) և հաշվեկշիռը հիմնական համակազմում |
| *Յուցանիշ 1.13.* | Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդունելության ծավալում (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի) |
| *Յուցանիշ 1.14.* | Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի) |

## *Ցուցանիշ 1.1.* Դիմորդների թիվը (ըստ կրթական աստիճանների, ուսուցման ձևերի և ուղղությունների)

| *Ցուցանիշ 1.1* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| Դիմորդների թիվն ըստ կրթական աստիճանների և ուղղությունների | **155** | **630** | **499** | **439** | **405** |
| **Բակալավրիատ (առկա)** | 7 | 347 | 288 | 222 | 208 |
| Հումանիտար գիտություններ | 3 | 167 | 144 | 109 | 93 |
| Բնական գիտություններ | 3 | 45 | 43 | 31 | 49 |
| Տնտեսագիտական | 1 | 108 | 81 | 60 | 45 |
| Կիրառական արվեստ | 0 | 27 | 20 | 22 | 21 |
| **Բակալավրիատ (հեռակա)** | 148 | 272 | 202 | 217 | 197 |
| **Մագիստրատուրա** | 0 | 11 | 9 | 0 | 0 |
| Կիրառական արվեստ | 0 | 11 | 9 | 0 | 0 |

Դիմորդների թիվը նվազելու միտում ունի, որը պայմանավորված է դպրոցների շրջանավարտների թվի նվազմամբ, ինչը պայմանավորված է տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակով և ժողովրդագրական պատկերով: Էապես նվազել է հումանիտար և տնտեսագիտական ուղղությամբ դիմորդների թիվը, իսկ աճ է գրանցվել բնական գիտությունների ուղղությամբ, որը պայմանավորված է նոր մասնագիտությունների ներդրմամբ:

2011 թվականի դիմորդների չափազանց փոքր թիվը պայմանավորված է հանրակրթական դպրոցների շրջանավարտների բացակայությամբ:

*2012թ.-ից հաշվառված են նաև մագիստրատուրայի դիմորդները: 2014թ.-ից ժամանակավորապես դադարեցվել է մագիստրատուրայի ընդունելությունը:*






## *Ցուցանիշ 1.2.* Դիմորդների բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում

| *Ցուցանիշ 1.2* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| Ընդհանուր դիմորդների թիվը | 2649 | 16155 | 13439 | 12300 | 11803 |
| ԵՊՀ ԻՄ դիմորդների թիվը(առկա) | **7** | **347** | **288** | **222** | **208** |
| ԵՊՀ ԻՄ դիմորդների բաժնեմասը | **0,26%** | **2,15%** | **2,14%** | **1,80%** | **1,76%** |

ԵՊՀ ԻՄ-ի դիմորդների բաժնեմասը ընդհանուր դիմորդների համակազմում համեմատաբար կայուն է (բացառություն է կազմում 2011թ.-ը՝ պայմանավորված հանրակրթական դպրոցների շրջանավարտների բացակայությամբ) և կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր թվում կազմում է մոտ 2%: Ընդհանուր դիմորդների համակազմում ԵՊՀ ԻՄ-ի դիմորդների նվազումը պայմանավորված է մարզում շրջանավարտների թվի նվազմամբ (հիմք *Մասնագիտական կողմնորոշման և պրակտիկայի կազմակերպման (ՄԿՊԿ) բաժնի հաշվետվությունը):*






## *Յուցանիշ 1.3.* Դիմորդների բաշխումն ըստ մարզերի

| *Յուցանիշ 1.3* | 2011/12 | | 2012/13 | | 2013/14 | | 2014/15 | | 2015/16 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Երևան | 11 | 7,10% | 2 | 0,32% | 4 | 0,82% | 11 | 2,51% | 5 | 1,23% |
| Կոտայք | 5 | 3,23% | 2 | 0,32% | 8 | 1,63% | 4 | 0,91% | 3 | 0,74% |
| Արմավիր | 0 | 0,00% | 0 | 0,00% | 0 | 0,00% | 1 | 0,23% | 0 | 0,00% |
| Գեղարքունիք | 3 | 1,94% | 6 | 0,95% | 2 | 0,41% | 5 | 1,14% | 5 | 1,23% |
| Շիրակ | 2 | 1,29% | 2 | 0,32% | 1 | 0,20% | 2 | 0,46% | 0 | 0,00% |
| Արարատ | 1 | 0,65% | 0 | 0,00% | 1 | 0,20% | 3 | 0,68% | 2 | 0,49% |
| Լոռի | 4 | 2,58% | 2 | 0,32% | 8 | 1,63% | 5 | 1,14% | 4 | 0,99% |
| Արագածոտն | 0 | 0,00% | 0 | 0,00% | 0 | 0,00% | 0 | 0,00% | 0 | 0,00% |
| Սյունիք | 0 | 0,00% | 0 | 0,00% | 0 | 0,00% | 0 | 0,00% | 1 | 0,25% |
| Տավուշ | **127** | **81,94%** | **613** | **97,30%** | **464** | **94,69%** | **405** | **92,26%** | **375** | **92,59%** |
| Վայոց ձոր | 0 | 0,00% | 0 | 0,00% | 0 | 0,00% | 1 | 0,23% | 0 | 0,00% |
| Այլ երկրներից | 2 | 1,29% | 3 | 0,48% | 2 | 0,41% | 2 | 0,46% | 10 | 2,47% |
| **Ընդամենը** | **155** | 100,00% | **630** | 100,00% | **490** | 100,00% | **439** | 100,00% | **405** | 100,00% |

Դիմորդների 92%-ից ավելին Տավուշի մարզից են, որը՝ համաձայն արտաքին շահակիցների շրջանում անցկացրած հարցումների, պայմանավորված է Մասնաճյուղի՝ տարածաշրջանում բարձր հեղինակություն և որակյալ կրթություն ապահովելու, ինչպես նաև միակ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունը լինելու փաստերով:

Երևան քաղաքից և այլ մարզերից դիմորդների փոքր տոկոսը պայմանավորված է այդ վայրերում գործող բուհերի առկայությամբ և ԵՊՀ ԻՄ-ից հեռու գտնվելու հանգամանքներով /աշխարհագրական դիրքով/: Ընդհանուր հիմունքներով դիմած օտարերկրացիների թիվը վերջին տարիներին տատանվել է 0,4-1,3%-ի միջակայքում: Իսկ 2015-16թթ. այն կազմել է՝ 2,47%, ինչը պայմանավորված է Վրաստանից դիմորդների թվի աճով:






## *Յուցանիշ 1.4.* Ընդունելությունն ըստ կրթական աստիճանների (անվճար, վճարովի)

| *Յուցանիշ 1.4* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| **Բակալավրիատ** | 2 | 178 | 209 | 172 | 161 |
| Անվճար | | 43 | 41 | 39 | 38 |
| Վճարովի | | 135 | 168 | 133 | 123 |
| **Մագիստրատուրա** | 0 | 10 | 4 | 0 | 0 |
| Անվճար | | 2 | 2 | | |
| Վճարովի | | 8 | 2 | | |

*2012-13 ուստարվա համար հաշվառված է նաև մագիստրատուրա ընդունվածների թիվը:*

Պետության կողմից հատկացված անվճար տեղերի թիվը մնացել է անփոփոխ է (41 տեղ), սակայն ընդունելության արդյունքներով որոշ տեղեր թափուր են մնացել միասնական քննությունները չհաղթահարելու պատճառով:

Վճարովի համակարգ ընդուվածների թվի նվազելը պայմանավորված է դիմորդների թվի նվազմամբ:

*2011-12 ուստարում առկա ուսուցման համակարգում ընդունելություն չի իրականացվել՝ պայմանավորված հանրակրթական դպրոցների շրջանավարտների բացակայությամբ:*






## *Ցուցանիշ 1.5.* ԵՊՀ ԻՄ-ի ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում

| *Ցուցանիշ 1.5* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| Կենտրոնացված ընդունելության ծավալը | 1672 | 12544 | 13846 | 12346 | 11775 |
| ԵՊՀ ԻՄ ընդունվածների թիվը | 2 | 178 | 209 | 172 | 161 |
| **ԵՊՀ ԻՄ բաժնեմասը ընդունելության ընդհանուր ծավալում (%)** | **0,12** | **1,42** | **1,51** | **1,39** | **1,37** |

Վերջին տարիներին ԵՊՀ ԻՄ ընդունվածների մասնաբաժինը կենտրոնացված ընդունելության համակարգում նվազել է, որը պայմանավորված է ինչպես դիմորդների՝ տարբեր քաղաքների բուհեր դիմելու հնարավորությամբ, այնպես էլ կենտրոնացված քննություններին նրանց պատրաստվածության աստիճանով, դիմորդների ընդհանուր թվի նվազմամբ:






## *Ցուցանիշ 1.6.* Մրցութային ցուցանիշն ըստ կրթական աստիճանների (առկա դիմորդների և ընդունվածների հարաբերությունը)

| *Ցուցանիշ 1.6* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| **Բակալավրիատի (առկա) դիմորդների թիվը** | **7** | **347** | **288** | **222** | **208** |
| Ընդունվածների թիվը | 2 | 178 | 209 | 172 | 161 |
| Մրցութային ցուցանիշը (բակ.) | **3,50** | **1,95** | **1,38** | **1,29** | **1,29** |
| **Մագիստրատուրայի դիմորդների թիվը** | 0 | 11 | 9 | 0 | 0 |
| Ընդունվածների թիվը | 0 | 10 | 4 | 0 | 0 |
| Մրցութային ցուցանիշը (բակ.) | 0 | 1,1 | 2,25 | 0 | 0 |

Վերջին տարիներին մրցութային ցուցանիշը նվազել է, ինչը պայմանավորված է դիմորդների թվի նվազմամբ և միասնական քննություններից դրական գնահատականի շեմի իջեցմամբ: Վերջին 3 տարիներին մասնաճյուղի դիմորդների 72%-ից 77%-ը հաղթահարել է միասնական քննությունները և ընդունվել մասնաճյուղ: Դրանում իր դերն ունեն նաև դիմորդների բավարար պատրաստվածությունը և միասնական քննությունների համար նախատեսված շտեմարաններում կատարված քիչ փոփոխությունները:

*2011թ. `պայմանավորված հանրակրթական դպրոցների շրջանավարտների բացակայությամբ,առկա ուսուցման համակարգում ընդունելություն չի իրականացվել:*
*2012թ.-ից հաշվառված է նաև մագիստրատուրա ընդունվածների թիվը:*









## *Ցուցանիշ 1.7.* Իգական սեռի հաշվեկշիռը դիմորդների և ընդունվածների ընդհանուր հոսքում

| *Ցուցանիշ 1.7* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| ԵՊՀ ԻՄ դիմորդների թիվը | 155 | 630 | 499 | 439 | 405 |
| ԵՊՀ ԻՄ իգական սեռի դիմորդների թիվը | 65 | 376 | 255 | 235 | 213 |
| **Հարաբերությունը (դիմորդներ)** | **41,9%** | **59,7%** | **51,1%** | **53,5%** | **52,6%** |
| ԵՊՀ ԻՄ ընդունվածների թիվը | 139 | 405 | 408 | 388 | 353 |
| ԵՊՀ ԻՄ իգական սեռի ընդունվածների թիվը | 57 | 267 | 226 | 193 | 188 |
| **Հարաբերությունը (ընդունվածներ)** | **41,0%** | **65,9%** | **55,4%** | **49,7%** | **53,3%** |

Վերջին 5 տարիների ընթացքում (բացառությամբ 2011-12 ուստարվա), ԵՊՀ ԻՄ-ի դիմորդների ընդհանուր թվի մեջ իգական սեռի բաժնեմասը տատանվում է 52-60% միջակայքում, որը պայմանավորված է ժողովրդագրական պատկերով և իգական սեռի՝ բարձրագույն կրթություն ստանալու ցանկությամբ: Ընդունվածների ընդհանուր թվում այդ բաժնեմասը կազմում է 50-66%, որը պայմանավորված է միասնական քննություններին իգական սեռի լավ պատրաստվածությամբ: Բացառություն է կազմում 2014-15 ուստարին՝ պայմանավորված արական սեռի ներկայացուցիչների պատրաստվածության բարձր աստիճանով: Ըստ մասնագիտությունների պատկերը խիստ տարբեր է:

Իգական սեռի ընդունվածների մասնաբաժինը իգական սեռի դիմորդների թվում վերջին 3 տարիներին բավականին կայուն է՝ 82-89%, որը նույնպես վկայում է աղջիկների ավելի լավ պատրաստվածության մասին:






## *Ցուցանիշ 1.8.* Օտարերկրյա դիմորդների թիվը և հարաբերությունը ընդունվածների թվին

| *Ցուցանիշ 1.8* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| Դիմորդների թիվը (բակալավրիատ,առկա) | **3** | **0** | **1** | **2** | **1** |
| Ընդունվածների թիվը | **2** | **2** | **1** | **2** | **1** |
| Օտարերկրյա դիմորդների հարաբերությունը ընդունվածների թվին | 1,5 | 0 | 1 | 1 | 1 |
| Դիմորդների թիվը (մագիստրատուրա) | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Ընդունվածների թիվը | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Օտարերկրյա դիմորդների հարաբերությունը ընդունվածների թվին | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Դիմորդների թիվը (բակալավրիատ,հեռակա) | **0** | **2** | **0** | **3** | **9** |
| Ընդունվածների թիվը | **0** | **2** | **0** | **3** | **9** |
| Օտարերկրյա դիմորդների հարաբերությունը ընդունվածների թվին | 0 | 1 | 0 | 1 | 1 |

Մասնաճյուղում օտարերկրյա դիմորդների թիվը բավականին ցածր է, սակայն ովքեր դիմել, ընդունվել են: Այսինքն՝ օտարերկրյա դիմորդների և ընդունվածների հարաբերության ցուցանիշը կայուն է: Հարկավոր է ակտիվացնել աշխատանքները օտարերկրյա /հիմնականում Վրաստանից, Ռուսաստանից/ դիմորդներ ներգրավելու ուղղությամբ: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը՝ մասնաճյուղում ձևավորվել է Միջազգային կապերի բաժին (10.09.2015թ. գիտխորհրդի թիվ 11 նիստ):






## *Ցուցանիշ 1.9.* Հեռակա ուսուցման դիմորդների թիվը և հարաբերությունը ընդունվածների թվին

| *Ցուցանիշ 1.9* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| Դիմորդների թիվը | 148 | 272 | 202 | 217 | 197 |
| Ընդունվածների թիվը | 137 | 217 | 195 | 216 | 192 |
| **Մրցութային ցուցանիշ (Հարաբերությունը)** | **1,08** | **1,25** | **1,04** | **1,00** | **1,03** |

Հեռակա ուսուցման համար մրցութային ցուցանիշը տատանվում է 1,0-ից 1,3-ի սահմաններում, ինչը վկայում է հեռակա ուսուցման համակարգի դիմորդների բավարար պատրաստվածության մասին, ինչի հաշվին նրանք կարողացել են հաղթահարել գնահատականների նվազագույն շեմը:






## *Յուցանիշ 1.10.* Հիմնական ուսանողական համակազմը (ըստ կրթական աստիճանների)

| *Յուցանիշ 1.10* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| **Հիմնական ուսանողական համակազմը** | 1673 | 1577 | 1548 | 1531 | 1693 |
| **Բակալավրիատ** | **811** | **637** | **611** | **523** | **666** |
| Հումանիտար գիտ. ֆակուլտետ | 397 | 324 | 313 | 259 | 333 |
| Բնական գիտ. ֆակուլտետ | 117 | 73 | 65 | 64 | 88 |
| Տնտեսագիտ. ֆակուլտետ | 200 | 160 | 156 | 132 | 161 |
| Կիրառական արվեստի ֆակուլտետ | 97 | 80 | 77 | 68 | 84 |
| **Օտարերկրյա ուս. համակազմը** | 2 | 3 | 5 | 4 | 7 |
| **Հեռակա ուսուցում** | **862** | **931** | **924** | **1004** | **1027** |
| **Մագիստրատուրա** | 0 | 9 | 13 | 4 | 0 |

Վերջին 3 ուստարիներին (2012/13-ից 2014/15) առկա ուսուցման համակարգի ուսանողական համակազմը նվազել է՝ պայմանավորված դպրոցների շրջանավարտների թվի նվազմամբ և 2011թ.-ին՝ նրանց բացակայությամբ, սակայն հեռակա ուսուցման համակարգի ուսանողական համակազմում աճ է նկատվում, ինչը պայմանավորված է երկրորդ մասնագիտություն ստանալու ցանկություն ունեցող դիմորդների թվի աճով, ինչպես նաև 2012թ.-ից սկսած՝ նոր մասնագիտությունների ավելացմամբ: Դա նպաստել է 2015-16 ուստարում ուսանողների թվի աճին թե՛ առկա և թե՛ հեռակա ուսուցման համակարգերում:






## *Ցուցանիշ 1.11.* Օտարերկրյա ուսանողների համակազմը և հաշվեկշիռը հիմնական համակազմում

| *Ցուցանիշ 1.11* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| ԵՊՀ ԻՄ ուսանողների համակազմը | 1673 | 1577 | 1548 | 1531 | 1693 |
| **Օտարերկրյա ուսանողների համակազմը, այդ թվում՝** | **2** | 3 | **5** | **4** | **7** |
| Բակալավրիատ | 2 | 3 | 5 | 4 | 7 |
| Մագիստրատուրա | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| **Օտարերկյա ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում (%)** | **0,12** | **0,19** | **0,32** | **0,26** | **0,41** |

Օտարերկրյա ուսանողների թիվը ընդհանուր համակազմում չնչին տոկոս է կազմում: Այս բացը լրացնելու համար անհրաժեշտ է մշակել աշխատանքների համալիր ծրագիր, որը կնպաստի բուհի միջազգայնացմանն ու արտաքին կապերի զարգացմանը: Հարկավոր է ակտիվացնել աշխատանքները օտարերկրյա /հիմնականում Վրաստանից, Ռուսաստանից/ դիմորդներ ներգրավելու ուղղությամբ: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը՝ մասնաճյուղում ձևավորվել է Միջազգային կապերի բաժին (10.09.2015թ գիտխորհրդի թիվ 11 նիստ):






## *Յուցանիշ 1.12.* Հեռակա ուսուցման հաշվեկշիռը հիմնական համակազմում

| *Յուցանիշ 1.12* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| Հիմնական համակազմը | 1673 | 1577 | 1548 | 1531 | 1693 |
| Հեռակա ուսուցման համակազմը | 862 | 931 | 924 | 1004 | 1027 |
| **Հեռակա ուսուցման հաշվեկշիռը հիմնական համակազմում (%)** | **51,52** | **59,0** | **59,69** | **65,58** | **60,66** |

Բակալավրիատում հեռակա ուսուցման ուսանողների բաժնեմասը հիմնական համակազմում մինչև 2014-15 ուստարին ներառյալ աճել է առկայում մեկ կուրս չունենալու պատճառով (2011թ.-ին առկա ուսուցման համակարգում ընդունելություն չի իրականացվել), նաև պայմանավորված երկրորդ մասնագիտություն ստանալու ցանկություն ունեցող դիմորդների թվի աճով, 2012թ.-ից սկսած՝ նոր մասնագիտությունների ավելացմամբ: 2015-16 ուստարվա համար նվազած 60,7%-ը պայմանավորված է առկա ուսուցման համակարգում 4 կուրսերի առկայությամբ, հետևաբար նաև ուսանողների քանակի ավելացմամբ:






## *Ցուցանիշ 1.13.* Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդունելության ծավալում (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)

| *Ցուցանիշ 1.13* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| **Ընդունելության ընդհանուր ծավալը** | **139** | **405** | **408** | **388** | **353** |
| Բակալավրիատ(առկա, վճարովի) | 0 | 135 | 168 | 133 | 123 |
| Հեռակա ուսուցում | 137 | 217 | 195 | 216 | 192 |
| Մագիստրատուրա (վճարովի) | 0 | 8 | 2 | 0 | 0 |
| **Ընդամենը վճարովի** | **137** | **360** | **365** | **349** | **315** |
| **Հաշվեկշիռն ընդունելության ծավալում (%)** | **98,6** | **88,9** | **89,5** | **89,9** | **89,2** |

Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդունելության ընդհանուր ծավալում համեմատաբար կայուն է (89-90%), որը պայմանավորված է վերջին 4 տարիներին պետության կողմից հատկացված պետպատվերի տեղերի և վճարովի տեղերի համամասնությունների կայունությամբ և վճարովի տեղերի գրեթե ամբողջությամբ լրացմամբ:






## *Յուցանիշ 1.14.* Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)

| *Յուցանիշ 1.14* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| **Հիմնական համակազմ** | 1673 | 1577 | 1548 | 1531 | 1693 |
| Բակալավրիատ(առկա) | 557 | 438 | 474 | 405 | 512 |
| Հեռակա ուսուցում | 862 | 931 | 903 | 987 | 1027 |
| Մագիստրատուրա | 0 | 8 | 9 | 4 | 0 |
| **Ընդամենը վճարովի** | 1419 | 1377 | 1386 | 1396 | 1539 |
| Հաշվեկշիռը հիմնական համակազմում (%) | **84,8** | **87,3** | **89,5** | **91,2** | **90,9** |

Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում վերջին 4 տարիների համար գրեթե կայուն է՝ 87%-91%:






*ԲՆԱԳԱՎԱՌ 2.*

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

| | |
|---|---|
| *Յուցանիշ 2.1.* | Անցումն առաջինից երկրորդ կուրս |
| *Յուցանիշ 2.2.* | Շրջանավարտներն ըստ կրթական աստիճանների |
| *Յուցանիշ 2.3.* | Հիմնական դասախոսական կազմը (բաշխումն ըստ պաշտոնների, գիտական աստիճանով/առանց աստիճանի) |
| *Յուցանիշ 2.4.* | Դասախոսական կազմի (լրիվ հաստիքային համարժեքով) բաշխումն ըստ աշխատանքային պայմանագրի ձևերի (հիմնական և համատեղություն, ժամավճար) |
| *Յուցանիշ 2.5.* | Դասախոսական կազմի տարեկան համալրումը (այդ թվում՝ ասպիրանտուրայից) |
| *Յուցանիշ 2.6.* | Դասախոսական հաստիքների օգտագործման գործակիցը (հաստիքների թիվ/ընդհանուր դասախոսների թիվ) |
| *Յուցանիշ 2.7.* | Հիմնական դասախոսական կազմի տարիքային բաշխումը |
| *Յուցանիշ 2.8.* | Որակավորման բարձրացում անցած դասախոսների թիվը |
| *Յուցանիշ 2.9.* | Իգական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը |
| *Յուցանիշ 2.10.* | Ուսանող/դասախոս (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերությունը |
| *Յուցանիշ 2.11.* | Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը |
| *Յուցանիշ 2.12.* | Դասախոսի միջին տարեկան ուսումնական բեռնվածությունը (այդ թվում՝ ըստ ուղղությունների) |
| *Յուցանիշ 2.13.* | Հրատարակված ուսումնամեթոդական նյութերի և մեկ դասախոսին ընկնող մեթոդական հրատարակությունների քանակը |
| *Յուցանիշ 2.14.* | Առաջադիմության միջին տարեկան ցուցանիշը (ըստ ֆակուլտետների) |
| *Յուցանիշ 2.15.* | Ուսանողական հարցման արդյունքները (ըստ ֆակուլտետների) |

## *Ցուցանիշ 2.1.* Անցումն առաջինից երկրորդ կուրս /առկա ուսուցման ձև/

| *Ցուցանիշ 2.1* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| Բակալավրի ծրագրեր (%) | 88,7 | - | 94 | 93,5 | 100 |
| Մագիստրոսական ծրագրեր (%) | - | - | 90 | 100 | - |

Նկատելի է առաջինից երկրորդ կուրս անցման կայուն ցուցանիշ:

2012/13 ուստարում առկա ուսուցման համակարգում և մագիստրատուրայում բացակայում են երկրորդ կուրս փոխադրվածները, քանի որ 2011/12 ուստարում առկա ուսուցման համակարգում ընդունելություն չի իրականացվել, իսկ մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպվել է 2012թ.-ից:



## *Յուցանիշ 2.2.* Շրջանավարտներն ըստ կրթական աստիճանների

| *Յուցանիշ 2.2* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| Բակալավրիատ | 439 | 420 | 393 | 188 | 350 |
| Մագիստրատուրա | 0 | 0 | 9 | 4 | 0 |

2014-15 ուստարում մասնաճյուղը տվել է շրջանավարտներ միայն հեռակա ուսուցման համակարգում: Չնայած վերջին 5 տարիներին (բացառությամբ 2014-15 ուստարվա) նկատվում է շրջանավարտների թվի նվազում, որը պայմանավորված է ժողովրդագրական տվյալներով, համապատասխան տարում դպրոցների շրջանավարտների՝ հետևաբար դիմորդների թվի նվազմամբ:






## *Ցուցանիշ 2.3.* Հիմնական դասախոսական կազմը
## (ներառյալ ԵՊՀ-ից ներքին համատեղության կարգով հրավիրված դասախոսներ)

| *Ցուցանիշ 2.3* | 2011/12 | | 2012/13 | | 2013/14 | | 2014/15 | | 2015/16 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Պրոֆեսոր | 5 | **5,1%** | 3 | **3,1%** | 3 | **3,1%** | 3 | **3,2%** | 3 | **3,1%** |
| Դոցենտ | 41 | **41,4%** | 28 | **28,9%** | 27 | **27,8%** | 25 | **26,6%** | 28 | **28,9%** |
| Ասիստենտ և դասախոս | 53 | **53,5%** | 66 | **68,0%** | 67 | **69,1%** | 66 | **70,2%** | 66 | **68,0%** |
| ***Ընդամենը*** | 99 | 100% | 97 | 100% | 97 | 100% | 94 | 100% | 97 | 100% |
| Այդ թվում՝ **գիտ. աստիճանով** | **38** | **38,4%** | **39** | **40,2%** | **38** | **39,2%** | **38** | **40,4%** | **45** | **46,4%** |

Հիմնական դասախոսական կազմում գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը վերջին 4 ուսումնական տարիներին կայուն է՝ 39-40%, իսկ 2015-16 ուստարում կազմել է 46,4%, որը լավ ցուցանիշ է: Այն պայմանավորված է երիտասարդ կադրերի գիտական ձեռքբերումներով և նաև մայր բուհից գիտական աստիճանով պրոֆեսորադասախոսական կազմի համալրմամբ:









## *Յուցանիշ 2.4.* Դասախոսական կազմի (լրիվ հաստիքային համարժեքով) բաշխումն ըստ աշխատանքային պայմանագրի ձևերի (հիմնական և համատեղություն, ժամավճար)

| *Յուցանիշ 2.4* | 2011/12 | | 2012/13 | | 2013/14 | | 2014/15 | | 2015/16 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հիմնական և համատեղութ. | 121 | **93,8%** | 112 | **88,9%** | 109 | **90,8%** | 111 | **88,1%** | 120 | **81,6%** |
| Ժամավճար | 8 | **6,2%** | 14 | **11,1%** | 11 | **9,2%** | 15 | **11,9%** | 27 | **18,4%** |
| ***Ընդամենը*** | **129** | 100,0% | **126** | 100,0% | **120** | 100,0% | **126** | 100,0% | **147** | 100,0% |

Հիմնական և համատեղությամբ դասավանդող դասախոսների թիվը վերջին 5 տարիների համար հիմնականում կայուն է՝ 110-120 դասախոս: Այն 2012-15թթ. նվազել էր առկա ուսուցման ձևում մեկ կուրս չլինելու պատճառով՝ պայմանավորված ամբիոնային ծանրաբեռնվածու-թյունների նվազմամբ:

Ժամավճարային հիմունքով դասավանդողների տոկոսը փոփոխական է, որը կախված է տվյալ ուստարվա առանձնահատկություններից, նոր մասնագիտություններում նեղ մասնագիտական դասընթացներով և հեռակա ուսուցման համակարգում նոր դասավանդողների ներառմամբ:






## *Ցուցանիշ 2.5.* Դասախոսական կազմի տարեկան համալրումը

| *Ցուցանիշ 2.5* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| Դասախոսական կազմի համալրումը | -12 | -2 | 0 | -4 | 3 |
| Հիմնական դասախոսական կազմ | 99 | 97 | 97 | 94 | 97 |

Հիմնական դասախոսական կազմի թվաքանակը էական փոփոխության չի ենթարկվել, քանի որ մասնագիտությունների քանակում, դասընթացների ժամաքանակներում, ամբիոնային ծանրաբեռնվածություններում էական փոփոխություններ չեն կատարվել:



## *Յուցանիշ 2.6.* Դասախոսական հաստիքների օգտագործման գործակիցը (հաստիքների թիվ-ընդհանուր դասախոսների թիվ)

| *Յուցանիշ 2.6* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| Ընդհանուր դասախոսական կազմ | 121 | 112 | 109 | 111 | 120 |
| Հաստիքներ | 87 | 79,75 | 74,75 | 79 | 86,5 |
| **Հաստիքների թիվ/դասախոսների թիվ հարաբերակցությունը** | **0,72** | **0,71** | **0,69** | **0,71** | **0,72** |

Վերջին 5 տարիների ընթացքում հաստիքների օգտագործման գործակիցը համեմատաբար կայուն է՝ **0,69-0,72**: Դա պայմանավորված է ծանրաբեռնվածության հստակ նորմատիվների պահպանմամբ և դասավանդողների նեղ մասնագիտացմամբ:






## *Ցուցանիշ 2.7.* Հիմնական դասախոսական կազմի տարիքային բաշխումը (ներառյալ ԵՊՀ-ից ներքին համատեղության կարգով հրավիրված դասախոսները)

| *Ցուցանիշ 2.7* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| Մինչև 35 տարեկան | 16 | 21 | 25 | 23 | 21 |
| 35-65 տարեկան | 73 | 68 | 62 | 63 | 68 |
| 65-ից բարձր | 10 | 8 | 10 | 8 | 8 |
| Ընդամենը | 99 | 97 | 97 | 94 | 97 |
| **Միջին տարիք** | **49,1** | **48,0** | **47,7** | **47,6** | **48,0** |

Վերջին 5 ուստարիներին հիմնական դասախոսական կազմը կայուն է: Պահպանվել են դասախոսական կազմում տարիքային բաշխման մասնաբաժինները, և միջին տարիքը կազմում է 48-49, որը տարածաշրջանային բուհի համար լավ ցուցանիշ է:









## *Յուցանիշ 2.8.* Որակավորման բարձրացում անցած դասախոսների թիվը

| *Յուցանիշ 2.8* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| Մասնագիտական | 2 | 1 | 7 | 43 | 2 |
| Մանկավարժական | 30 | 32 | 77 | 5 | 1 |
| Համակարգչային | 24 | 33 | 4 | 8 | |
| Այլ | 2 | 3 | 7 | 31 | |
| **Մեկ ուսումնական տարում որակավորման բարձրացում անցած դասախոսների թիվը** | ***56*** | ***69*** | ***95*** | ***87*** | ***3*** |

Վերջին տարիների ընթացքում որակավորման բարձրացում անցած դասախոսների թիվը աճել է՝ պայմանավորված մասնաճյուղում գործող կրեդիտային համակարգով ԵՊՀ դասախոսների վերապատրաստման գործընթացներով: 2014/15 ուստարում ավելացել է մասնագիտական որակավորում անցած դասախոսների թիվը, քանի որ նախորդ տարիներին դասախոսները հիմնականում անցել են որակավորումների բարձրացման դասընթացներ մանկավարժության և տեղեկատվական տեխնոլոգիների ոլորտներում:






## *Ցուցանիշ 2.9.* Իգական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը

| *Ցուցանիշ 2.9* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| Հիմնական դասախոսական կազմ | 99 | 97 | 97 | 94 | 97 |
| Իգական սեռի դասախոսներ | 51 | 52 | 61 | 50 | 43 |
| **Իգական սեռի հաշվեկշիռը (%)** | **51,5** | **53,6** | **62,9** | **53,2** | **44,3** |

Վերջին 5 ուստարիներին հիմնական դասախոսական կազմում իգական սեռի մասնաբաժինը կազմում է ավելի քան 50%, որը պայմանավորված է տարածաշրջանի ժողովրդագրական պատկերով, և մասնաճյուղի համար կարելի է համարել լավ ցուցանիշ: 2015-16 ուստարվա համար այն կազմել է 44.3%, ինչը հիմնականում պայմանավորված է մայր բուհից տղամարդ դասախոսների և նոր երիտասարդ կադրերով համալրմամբ:






## *Ցուցանիշ 2.10.* Ուսանող/դասախոս (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերությունը

| *Ցուցանիշ 2.10* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| Ուսանողներ | 1673 | 1577 | 1548 | 1531 | 1693 |
| Դասախոսական հաստիքներ | 87 | 79,75 | 74,75 | 79 | 86,5 |
| **Ուսանող/դասախոս հարաբերությունը** | **19,23** | **19,77** | **20,71** | **19,38** | **19,57** |

Վերջին 5 տարիների կտրվածքով ուսանող/դասախոս հարաբերակցությունը համեմատաբար կայուն է՝ պայմանավորված ուսանողների թվի և դասախոսական հաստիքների համամասնական փոփոխությամբ:

*Ուսանողների թվաքանակն ընդգրկում է նաև հեռակա ուսուցման համակարգով սովորողներին:*






## *Ցուցանիշ 2.11.* Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը

| *Ցուցանիշ 2.11* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| Ուսանողներ | 1673 | 1577 | 1548 | 1531 | 1693 |
| Ուսումնաօժանդակ կազմ | **38** | **26** | **26** | **25** | **24** |
| **Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը** | **44,03** | **60,65** | **59,54** | **61,24** | **70,54** |

2012-15թթ. տարիներին նկատվում է ցուցանիշի կայունություն, որը պայմանավորված է ուսանողների թվաքանակի որոշակի նվազմամբ (պատճառը մեկ կուրսի բացակայությունն է) և ուսումնաօժանդակ կազմի քիչ փոփոխությամբ, իսկ 2015-16 ուստարում այդ ցուցանիշը հասել է գրեթե 71-ի, ինչը պայմանավորված է ուսանողների թվաքանակի աճով և ուսումնաօժանդակ անձնակազմի թվաքանակի օպտիմալացմամբ:






## *Յուցանիշ 2.12.* Դասախոսի միջին տարեկան ուսումնական բեռնվածությունը (ըստ ուղղությունների)

| *Յուցանիշ 2.12* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| Հումանիտար գիտությունների ֆակուլտետ | 713 | 732 | 886 | 881 | 825,9 |
| Բնական գիտությունների ֆակուլտետ | 592 | 717 | 818 | 903 | 761,9 |
| Տնտեսագիտության ֆակուլտետ | 698 | 607 | 785 | 876,75 | 885,6 |
| Կիրառական արվեստի ֆակուլտետ | 636 | 671 | 676 | 836,25 | 730,4 |
| Համահամալսարանական ամբիոններ | 728 | 738 | 687 | 976,5 | 875,6 |
| **Համահամալսարանական միջինը** | **667** | **693** | **770** | **811,8** | **815,9** |

Մասնաճյուղում միջին տարեկան բեռնվածությունը, սահմանված նորմերի համաձայն, կազմում է 700-800 ժամ: Վերջին 2 ուստարիներին բոլոր ֆակուլտետներում դասախոսի միջին տարեկան բեռնվածությունը գերազանցում է սահմանված նորմատիվը, որը պայմանավորված է մասնաճյուղի ղեկավարության կողմից ֆինանսական ռեսուրսների խնայողության քաղաքականության իրականացմամբ:

Սակայն համամասնաճյուղային միջինը մոտ է սահմանված նորմատիվ արժեքին:



*Ցուցանիշ 2.13.* Հրատարակված ուսումնամեթոդական նյութերի և մեկ դասախոսին ընկնող մեթոդական հրատարակությունների քանակը

| *Ցուցանիշ 2.13* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| Ուսումնամեթոդական նյութերի քանակը | 16 | 8 | 8 | 15 | 16 |
| Հիմնական դասախոսական կազմը | 99 | 97 | 97 | 94 | 97 |
| **Մեկ դասախոսին ընկնող մեթոդական հրատարակությունների թիվը** | **0,16** | **0,08** | **0,08** | **0,16** | **0,16** |

2014-15 և 2015-16 ուսումնական տարիներին ուսումնամեթոդական նյութերի քանակը կրկնակի ավելացել է, որը պայմանավորված է ուսումնամեթոդական աշխատանքներ ներկայացնող դասավանդողներին մասնաճյուղի ցուցաբերած աջակցության ու խրախուսման քաղաքականության իրականացմամբ:






## *Յուցանիշ 2.14.* Առաջադիմության միջին տարեկան ցուցանիշը (ըստ ֆակուլտետների)

| *Յուցանիշ 2.14* | 2011/12 | 2012/13 | 2013/14 | 2014/15 | 2015/16 |
|---|---|---|---|---|---|
| Հումանիտար գիտությունների ֆակուլտետ(%) | 75,1 | 85,5 | 74,1 | 74,9 | **88,4** |
| Բնական գիտությունների ֆակուլտետ (%) | 73,1 | 74,4 | 50,8 | 66,2 | **76,6** |
| Տնտեսագիտության ֆակուլտետ (%) | 55,3 | 56,3 | 59,6 | 60,6 | **76,5** |
| Կիրառական արվեստի ֆակուլտետ (%) | 55,3 | 75,8 | 57,9 | 76,4 | **78** |
| **Միջին տարեկան ցուցանիշը(%)** | **64,7** | **73,0** | **60,6** | **69,5** | **79,9** |

Առաջադիմության (լուծարքային շրջանից առաջ) միջին տարեկան ցուցանիշը տարեցտարի աճում է, ինչը պայմանավորված է լրացուցիչ խորհրդատվական պարապմունք-ների կազմակերպման և ընթացիկ քննությունները թեստային համակարգով անցկացնելու հանգամանքներով: Սակայն թեստերի գնահատման չափանիշների փոփոխման արդյունքում 2013/2014 ուստարում գրեթե բոլոր ֆակուլտետներում գրանցվել է առաջադիմության անկում: Իսկ 2014/2015 ուստարուց սկսած, դասավանդողների հիմնավորմամբ և ելնելով դասընթացների առանձնահատկություններից, ընթացիկ քննությունների և ստուգումների անցկացման ձևերի /թեստային, գրավոր, բանավոր/ ընտրությունը կատարել է դասախոսը, ինչը հաստատվել է ամբիոնում, որն էլ նպաստել է առաջադիմության միջին ցուցանիշի աճին:



## *Ցուցանիշ 2.15.* Ուսանողական հարցման արդյունքները (ըստ ֆակուլտետների)

| *Ցուցանիշ 2.15* | 2011/12 | | 2012/13 | | 2013/14 | | 2014/15 | | 2015/16 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
